ՆՈՒԷՐ ՎԱՐԺԱՊԵՏ Մ. Ա.-ԻՆ

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՑԻ

Քեզ եմ նուիրում, անզոյդ բարերար,
Քեզ, որ քառասուն տարի շարունակ
Հայրենի երկրիդ կրթութեան համար
Զը խընայեցիր ոչինչ աշխատանք.
Դեռ երիտասարդ եռանդով վառուած՝
Դու տուիր նորան քո խանդ և արիւն,
Անձնական վայելք ոտքի տակ առած՝
Ընտրեցիր տանջանք և աղքատութիւն.
Ուսուցչի խաչը դրրած ուսերիդ՝
Անցար անտրրտունջ փուշ ու տատասկից,
Երբէք չ՝ընկճեցաւ քո հրպարտ հոգիդ,
Երբէք չը լրսուեց գանդատ քեզանից.
Խորին խաւարում մենակ, հալածուած՝
Դու յառաջ տարար լուսոյ դրրօշակ,
Քո յոյսդ էր միայն երկրնքում Աստուած
Եւ երկրիս վերայ բարւոյ յաղթանակ։

Փառք քեզ—յաղթեցիր. աղքատիկ տան մէջ
Քո հայրենական սիրած քաղաքում
Բորբոքուած ճրրագ կը մընայ անշէջ,
Թէպէտ և լինիս դու գերեզմանում։
Ես քանի՛ անգամ վրկայ եմ եղել,
Երբ հիւսն ու դարբին ջերմ արտասուքով

Անմոռանալի անունդ են օրհնել
Արդար վաստակի հացը կըտրելով.
Քանի՞ որբ, անտուն՝ իրանց սեպհական
Համեստ յարկի տակ հիմա բոլորուած,
Ցիշել են խընամքդ ու սէրդ հայրական՝
Կարօտեալներին առատ պարգևած։
Եւ քանի դեռ կայ այդ փոքրիկ քաղաք,
Քանի կը լըսւի այնտեղ հայ լեզուն,
Չի՛ ջընջուիլ երբէք քո քաղցր լիշատակ,
Չի՛ մոռացուիլ քո պաշտելի անուն։

—

Ընդունի՛ր և այս սակաւիկ տողեր
Հոգովդ ծընած, դըդուած որբուկից,
Որ օրօրոցից մինչև այս օրեր
Վայելել է սէր անվերջ քեզանից.
Որ հեռու, օտար, կորած, մոռացուած,
Ուսանողական աղքատ սենեակում
Տեսել է վերան ձեռքդ տարածուած,
Երբ մահն էր կեանքի հետ պատերազմում։
Ես դիտեմ քո վիշտ.—ուսուցիչն իւր հետ
Զոհում է նոյնպէս անմեղ ընտանիք...
Սիրտ առ—քո բարիք չեն անցնիլ անհետ,
Այդչափ քարասիրտ չեն լինիլ մարդիկ.
Գուցէ կը խընդալ դեռ քո ծերութիւն,
Թէև ուշ՝ ժըպիտ կը պարզէ հոգիդ,
Գուցէ մո՛տ է շատ հիմա օգնութիւն—
Այդ պարտքն անվրճար հայրենի երկրիդ։